

Դէպ անծանօթ կղզիներ, հոր հաւատքի  
 Դէպ ի նըշանը խաչակիր նըւագներ:  
 Կը Մաչէի հոգոյ հոգոյն ծնըդդի:  
 — Իմ թագաւոր: — Իւ անիկա կը ժպտէր  
 Քանգուրներուն մէջէն ինծի: — Գորտիւնա:

Թրգմ. Հ. Ա. ՂԱՅԻԿՆԱՆ

## ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ



### Ա. — ԱՇՈՒՂԸ

Հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ անյայտ և անծանօթ մնացած աշուղներից մէկն է Ղուլ Յովհաննէսը, որ ապրել է ստեղծագործել է 18-րդ դարի երկրորդ և 19-րդ դարի առաջին կիսում:

Հայ ժողովրդից կեանք առած, նրա մէջ մեծացած ու անւած մի աշուղ է եղել նա, որ ապրել է միշտ ժողովրդի մէջ և ժողովրդի համար:

Ժողովրդական երգեր յօրինող մի իղէալիստ-երգիչ է եղել նա, որ իր ամբողջ կեանքը նւիրել է իր արւեստին, իր շօնգուրին և իր ժողովրդին:

Աշուղութիւնը եղել է նրա իղէալը, շօնգուր՝ իր երգը, իր սիրտն ու հոգին, իսկ ժողովուրդը՝ իր կեանքը: Այդ ժողովրդին էլ նա տւել է իր հոգու թրթռացումները, իր սրտի բարախումները, իր շօնգուրն ու մեղեդին:

Երգել է նա ժողովրդական, ուսմիկ, պարզ, բայց արւեստով, Այդ երգերով նա խորապէս ազդել և ներգործել է իր ժամանակակից ժողովրդի հոգեկան աշխարհի վրայ և իր սազով փայլ և կենդանութիւն է տւել նրա խնջոյցներին, հանդէսներին տօնախմբութիւններին:

Մտաւորապէս մի ամբողջ դար ծառայել է նա աշուղական արւեստին, միշտ հաւատարիմ իր ընդգրկած գաղափարին, միշտ անձնատուր իր պաշտամունքին: Իր ամբողջ կեանքի ընթացքում նա իր շօնգուրի լարերով վառ է պահել ժողովրդի մէջ աշուղական երգն ու արւեստը:

Նա եղել է իր ժամանակաշրջանի հարգատ աշուղը և առանձին յարգանքի և գուրգուրանքի առարկայ է դարձել:

Ինըսուռ տարիներից ի վեր նա գերեզման է իջել, լռել յարիտեան, սակայն ժամանակը և հանգամանքները չեն կարողացել ջնջել նրա անունն ու յիշատակը: Այսօր նա կենդանի է և ապրում է ժողովրդի սրտում: Ապրում է նա իր շօնգուրով, իր ուսմիկական պարզ բայց գողտրիկ տաղերով:

Այդ տաղերով նա ուղագրաւ մի էջ է գրաւում պարսկահայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ<sup>1</sup>:

### Բ. — ՆՐԱ ԿԵԱՆՔԸ

Ղուլ Յովհաննէսի կեանքի մասին, տարբարխտարբար, շատ աղքատիկ կենսագրական ծանօթութիւններ ունինք: Ե՛րևել է նա մտաւորապէս 1740-ական թւականներին, մեռել է 1834-թուական 16-ին և թաղւել է Նոր-Ջուղայի հայոց գերեզմանատանը, ուր նրա հողակոյտ վրայ դրած է անպաճոյճ մի քար հետեւեալ պարզ ժակագրութեամբ.

Այս է սապան  
 Առաքելի որդի  
 Աշուղ Յովհաննէսին,  
 Որ հանգեաւ ի տէր  
 Ի 1834ի 16-թուական:

Նոր-Ջուղայեցի ծերունիների ասելով՝ Ղուլ Յովհաննէսն անպրագէտ, բայց բանաստեղծական ձիրքով օժտուած աշուղ է լինում և առանձին յարգանքի ու ուղադրութեան առարկայ դառնում իր միջավայրում: Աշուղական շնորհք ստանալու իղէան գրչան է նրան «Մշու սուլթան Մ. Կարապետ»: Պատմական այդ վանքում են «ստացել» իրենց աշուղական շնորհքը մեր աշուղներից շատերը և սրբին նւիրել մի շարք գովասանական երգեր: Անա այդ երգերից անտիպ մի փշրանք.

1. Տե՛ս մեր յօդածը Քանիքի «Նոր Եարմու»-ի մէջ, 1928, թիւ 98-99, 40-41, 42-43:

«Ջմրուխտ օձն է կաւ՝ գլուխն էլ ակ ա՛, խաշնամբոյ բերեց Ս. կարապետին»:

Աշուղ Ղուլ Յովհաննէան էլ խորը համոզումով ուխտ է անում Ս. կարապետին, ծնկաչոք և արտասւաթոր ազօթում սրբին և հասնում է իր մուրաղին: Թէ՛ որքան ժամանակ է մնում վանքում և ինչ է ստանում սրբից, ո՛չ մի տեղեկութիւն չկայ. միայն այսքանը յայտնի է, որ նա այնուհետև երգեր ու եղանակներ է կերտում և շօնջուրը ձեռքին համարձակ դուրս է գալիս ասպարէզ, Նա շրջում է աշխարհի շատ կողմերը և շատ երկիրներ տեսնում, ինչպէս ինքն է յիշատակում իր սիրային երգերից մէկում.

« Բոլոր երկիր ման եկել ամ,  
Էլ մին յատուկ աշխարհ չկայ »:

Իսց ի աշուղութիւնից, նա զբաղւում է նաև բնօխութեամբ (ճարտարապետութեամբ), բայց վերջում բոլորովին թողնում է իր արհեստը և ամբողջապէս ներկուում աշուղութեան:

Ահա այն հատուկտոր տեղեկութիւնները, որ ունինք Ղուլ Յովհաննէսի կեանքի մասին. իսկ թէ՛ նա ինչպիսի՛ ընտանեկան հանգամանքների մէջ է մեծանում, ովքե՛ր են նպաստում նրա մտաւոր զարգացմանը և թէ՛ առհասարակ ինչպիսի՛ միջավայրի և պայմանների ծնունդ է, տարբարխտարբար տեղեկութիւններ պակասում են:

**Գ.—ԱՇՈՒՂԻ ՏԱՂԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Իրենց ներքին բովանդակութեան տեսակէտով՝ Ղուլ Յովհաննէսի երգերը բաժանուում են վեց խմբի. 1. Միրոյ, 2. Բարոյական—խրատական, 3. Երգիծական, 4. Այլարանական, 5. Պատմական և, 6. Միւս երգերը: Այդ երգերի մէջ կան բաւական յաշող կտորներ, բայց կան նաև միջակ և յաճախ շատ թոյլ արտադրութիւններ: Մի քանի ոտանաւորների ոճն էլ միմեանցից տարբեր է և շատ տեղերում լեզուական աղասաղութներ են զգացում: Երևում է, որ նրանք ենթարկւել են ժամանակի փոփոխութիւններին, յաւելութիւններին կամ

կրճատութիւններին: Մի հանգամանք ևս. երգերի մէջ գործածւած են բազմաթիւ պարսկերէն բառեր, այլ և ամբողջ նախաբանութիւններ, Դրանից երևում է, որ աշուղը ծանօթ է եղել պարսկական լեզւին և բանաստեղծութեան, և գուցէ ուրիշի օգնութեամբ կարդացել է (քանի որ ինքը անգրագէտ էր) պարսիկ երևելի բանաստեղծների՝ Մասդիի, Հաֆշդի ու Յիրզուտու երգերը և որոշ չափով ներշնչւել է նրանցից. սուլթանն ու իւան, բարբար, բրբուլ, հար և այլ բառեր ու մակդիրներ պարսից բանաստեղծութիւններն են յիշեցնում: Երգիչն ազդւել է նաև պարսկահայ աշուղների՝ Ղուլ Արզունու, Ղուլ Էգագի և Բաղդեր օղուի երգերի մօտիւներից: Այդ երգիչները նրա ժամանակի յայտնի աշուղներն էին, որոնք որոշ չափով ներգործել են նրա հոգու վրայ:

Այսպէս կամ այնպէս՝ Ղուլ Յովհաննէսի երգերը, որոնք ճշգրիտ արտայայտութիւնն են աշուղի անձնաւորութեան և նրա ներքին յոյզերի ու ապուռներից, բաց են անում մեր առջ ժամանակակից կեանքի որոշ երևոյթները: Բայց նախ քան այդ տաղերի բովանդակութեան անցնելը, ծանօթանանք նախ այն դարի, ժամանակաշրջանի քաղաքական և սոցիալական պայմաններին հետ, որոնց մէջ ապրել և ստեղծագործել է Ղուլ Յովհաննէսը: Նոր-Ջուղայի պատմութիւնը և նա մանաւանդ աշուղի տաղերը հասկանալու համար դրանք իրիսա կարևոր պարագաներ են:

**Դ. — ԺԸ—ԺԹԵ ԴՆՐԱՅԵՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ.**

Ղուլ Յովհաննէան ապրել է ծանր և աղէտալի ժամանակաշրջանում. 1780—1830 թւականն է դա: Այդ ժամանակամիջոցը Նոր-Ջուղայի պատմութեան ամենամոռյլ էջերից մէկն է կազմում: Քաղաքական աննպաստ հանգամանքների պատճառով՝ Նոր-Ջուղայում տեղի են ունենում մի շարք անասելի բռնութիւններ, կեղեցումներ և հարստահարութիւններ:

Այդպիսի իրականութիւններից մէկն է

1816 թւականը, Դա Նոր-Ջուղայի պատմութեան մէջ բաւական դառն և յուզիչ մի տարեթիւ է կազմում, Մի շնչին դէպք վրդովում է տարագիր ժողովրդի ամբողջ կեանքը: Ահա այդ դէպքի պատկերը: Թէհրանում Շահի արդախներէից մի քանիսը պալատի գանձարանից մօտ 6000 թուման ոսկի դրամ գողանալով պահում են սենեակներից մէկում, որպէս զի յարմար առիթով՝ զուրս փախցնեն: Այդ ժամանակում Նոր-Ջուղայեցի չորս սպակեզործ հայեր (Իւրէլ Չարբրեան, Մանուկ Խաչիկեան, Յարութիւն Տէր-Խաչատրեան և Ալէքսի Դիոնէսիոսեան), որոնք պալատի ապակները շինելիս են լինում, ստանալով դրամը՝ գաղտնի վերցնում են և իրենց մէջ բաժանում: Գաղտնիքը սակայն շուտով բացնում է: Մանուկ Խաչիկեան հարբած ժամանակ պարծենալով պատմում է ընկերներին իր գանձի մասին: Լուրը հասնում է Սպահանի քաղաքագետ Ռամազուն Աւի խանին: Մանուկ բանտարկւում է իր ընկերներով: Ֆաթալի շահը երբ տեղեկանում է, որ գողերը Նոր-Ջուղայեցի սպակեզործներն են, հրամայում է Ջուղայի բնակիչներին սրի անցկացնել և այդ նպատակով Նոր-Ջուղա երկու հազար հոգուց բաղկացած թուրքմէշների մի զօրաբաժին ուղարկել: Բանակը շարժւում է դէպի Նոր Ջուղա, բնաջնջելու համար գաղթական անմեղ ժողովուրդը: Այդպէս է եղել պատմութեան մէջ շատ յաճախ ժողովուրդների ճակատագիրը: Նրանք զոհ են գնացել բռնակալ իշխողների կամայականութիւններին: Այդպէս էլ պիտի լինէր Նոր-Ջուղայի ժողովրդի ճակատագիրը, եթէ սակայն մի հանգամանք չփոխեր իրերի դրութիւնը: Այդ ժամանակ Թէհրանում է լինում Սպահանի առաջին նախարարը՝ Մահմադ Հօսէն խան սադրը: Նա լսելով շահի կատարածի անողոք հրամանը, գնում է նրա ոտների առաջ և արտասուալից խնդրում է խնայել անմեղ ժողովրդին ու իբր արեան փրկարկես խոստանում է 25 հազար թուման: Շահը զիջում է և բանակը կէս ճանապարհից յետ դառնում: Այնուհետև սակայն մի

խումբ ոստիկաններ Նոր-Ջուղա են անցնում և անասելի բռնութիւններով առնում վերոյիշեալ գումարը: Նրանք կողպատում են եկեղեցիների և վանքերի հարստութիւնը, ժողովուրդին կեղեքում, հարստահարում և շատերին դժբախտացնում: Իսկ սպակեզործները, նրանց թէհրան տանելով երեքլին Թիւրանթաւար են անում, մէկին էլ խարանով և տանջում:

1. — Պատմական երգեր՝.

Ահա ժամանակի վերոյիշեալ այդ տխուր դէպքը ծանր սպաւորութիւն է թողնում Ղուլ Յովհաննէսի վրայ և նա երգի նիւթ է դարձնում, որի մէջ պարզ, բայց մաշվ գոյներով նկարագրում է ոստիկանների բարբարոսական անգթութիւնները: Նա այսպէս է պատկերացնում ժողովրդի ծանր վիճակը.

« Մահմադ Հասան զարէթն ա մեզի հագի,  
Մինն հեզի կտանք, դառ կուզի բազի...  
Չար զազանի Ծման բերանն ա բացել:..  
Ջուղան ողջ կլանեց, ո՛վ ա մնացել:»

Մոտտարաթ քան զողջն իւել չարչարանք,  
Ինչ որ ունինք, ծախեցինք, տուինք չլոծանք.  
Կողպտեցին թամամ եկեղեցի ու վանք,  
Քաշեցին քաղաքի Շահի մէլդանն:

Թաֆիլ տուինք ծախուեց թամամ տուն ու տեղ,  
Հարուստ և աղքատ չունինք, ողջ իրար մաֆնդ.  
Ժողովուրդ, քահանայ, վարդապետ անմեղ,  
Դրէլ ան գեարդանին էդ չարչարանքն:»

Այս ողբերգական դէպքից յետոյ Նոր-Ջուղայի ժողովրդի համար բացւում է մի այլ տխուր տեսարան: Դա 1832-4 թւի դաժան սովն է, որ դամոկլեան սրի նման կախւում է ժողովրդի գլխին: Սովի հետևանքով կապւում է առևտուրը, փակւում են խանութներէից շատերը և տիրում է անասելի թանգութիւն. էլ ոչ ոք մտի, իւզի, բրնձի և պանրի երես չի տեսնում: ոչ ոքի ձեռք ցորենի հաց չի ընկնում:

1. ՏՆՍ մեր յօդուածը «Գրեցաւ»-ում, 1923, Ա. 41թ, էջ 124-136.

Մարդիկ քաղցածութիւնից սուլուկ, խոտ և անասունների միս են ուտում: Շատերն էլ դաշտերում «անհաղորդ» սովամահ են լինում:

«Շատոց մեռան անհաղորդ, անպատան,  
Իւր հագի շորերն վարշամակ էլա »:

Սովի հետևանքով շրջակայ գաւառներից բազմաթիւ աղքատ և չքաւոր զիւլյացիներ թափոււմ են Նոր-Ջուղաս: Նրանք քաղցից բաղխում են Ղուղայեցիների զոռները և թախանձագին ձայներով մի կտոր հաց աղբրում: Այսպիսի ծանր հանգամանքների մէջ եղբայրը մոռանում է եղբորը, հայրը որդուն, իսկ շատերը ստիպւած թողնում են Նոր-Ջուղասն և պանդրաւում գաղթում հիւսուորացէս Հընդկաստան և Բրմաստան: Ահա թէ ինչպիսի մասլ գոյներով է գծում աշուղը սովի պատկերը:

« Մարդն մարդի կերաւ, սպաննեց նահախ,  
Գարշ հարած ուտեն համարձակ էլա...  
Համարձակ են ուտում գազանի փրսն,  
Էլ ո՛վ էր չղում լաւն ու փրսն,  
Բակէն, սուլուկն, ալէֆ, զորաթն,  
Անասնոց կերակուրն մեզ խորաք էլա »:

Այսպէս սոյն երկու տաղերը մեզ որոշ գաղափար են տալիս այն մասլ ժամանակաշրջանի մասին, որի մէջ ապրել է Ղուլ Յովհաննէսը: Սակայն միայն յիշեալ տիտուր անցքերը չեն, որ դառնացնում են Նոր-Ջուղայի ժողովրդի կեանքը: Նոյն ժամանակամիջոցում տեղի են ունենում մի շարք ողբերգութիւններ, որոնց պատկերը տարարխտաբար չենք տեսնում Ղուլ Յովհաննէսի տաղերի մէջ: Մենք գծենք այստեղ:

Նաղիր շահի մահից յետոյ Պարսկաստանը ենթարկոււմ է կատարեալ անիշխանութեան, որի հետևանքով էլ իրանի գահը կուսիմծոր է դառնում զանազան արկածախնդիր և փառասէր իշխանների ու խաների ձեռքին, որոնք խլում են գահը իրար ձեռքից: Էւ ահա տեղի են ունենում ներքին, արիւնահեղ ընդհարումներ և յափոխական յուզիչ դէպքեր: Ամէն տարի,

կամ երկու տարին մի անգամ, նոր արիւնաբոււ շահ է բազմում իրանի գահի վրայ և բռնակալական բարբարոս կարգերով ճնշում ժողովրդին: Այդպիսի հանգամանքների մէջ, անշուշտ, սուժում են հպատակները և զխաւորացէս Նոր-Ջուղայի խաղաղ և անպաշտպան հայերը: Շահերը և մանաւանդ աւագակ իշխաններն ու խաները ամէն տեսակ բարբարոսական անգթութիւններով տանջում, հարստահարում և աղքատացնում են գաղթական ժողովուրդին: Այդ է ցոյց տալիս մեզ նրա 1780-90-ական թւականների տարեգրութիւնը, որ բաւական յուզիչ է և ողբերգական: Բայանք նրա դառն էջերը:

1780-ին Ալի Մուրադ խանը Ղազինից չլում է Սպահան և տիրում Պարսից գահին: Պարսից պատմութեան ժողովուրդնաւորներից մէկն է Մուրադ խանը: Նա ծրագրում է գրաւել Նոր-Ջուղայի Ս. Ա. մենափրկչեան վանքի եկեղեցական անօթները: Այդ նպատակով էլ բանտարկում է ժամանակի Մկրտիչ և նրա յաջորդ Յակոբ առաջնորդներին և անջնանքների ենթարկում: Չարաչար խոշտանգում է նաև վանքի միաբաններին և նոյն իսկ աշակերտներին: Այդպիսի դաժան միջոցներով բռնադրւում է նա վանքի 25 լիտր արծաթն և երեք չարէք ոսկին՝, ժողովրդի կեանքն աւելի դառնացնում են Մուրադի բանակում ծառայող վրացի կամաւորները: Նրանք մոռնում են հայերի տները հարստահարում, կեղեքում, լլկում կանանց և բազմաթիւ ընտանիքներ դժբախտացնում: Սակայն սրանք զեռ ողբերգութիւնների ըսկիզբն էին: Այնուհետև գալիս են աւելի դառն օրեր:

Նոր-Ջուղայի տարագիր ժողովրդի համար բացոււմ է մի նոր սրտամոխիկ տեսարան, երբ Սպահանի գահի վրայ բազմում է բռնակալ Ալինաղի խանը: Սա ծանր հարկերով և ամէնանիսիզ բռնութիւններով ճնշում, կեղեքում է Նոր-Ջուղայե-

1. « Պատմութիւն Նոր-Ջուղայու » Տէր-Յովհաննէսի, հատր Ա. երես 327.

ցիններին, առնու՛մ է նրանցից մեծամեծ գումարներ և 24 բեռ օդի: Ուպա խաղում է հայի ընտանեկան պատւի հետ: Զուգայեցիներին պահանջում է նա երկու գեղեցիկ օրիորդներ: «Իբրև եկն Ալնադի խան յԱպպահան», - գրում է ժամանակակից անասանս պատմիչ Մտեփանոս Երէցը - առաքեաց ի զօրաց իւրոց առ Զուգայեցիսն թէ տուք ինձ կոյսս գեղեցիկս, յազգէ ձերմէ, այպա թէ ոչ՝ աւերելոց եմ զբնակութիւնն ձեր: Յորժամ այս ցոսկալի հրամանս եղև ի պղծոյն... զբեթէ ոչ մնաց ուունս որ ունէր աղջիկս առանց կաշառաց, ո՛հ ողորմելի ազիւնս մերոյ, ո՛հ թէ ո՛րքան աղքատացան վասն կաշառաց, ո՛հ թէ ո՛րքան ողբս և կսկիծս կրեցին»: Շահի ֆառանները շրջում են հայերի տները, որպէս զի ընտրեն ամենագեղեցիկ կոյսերը: Գառնութեան բաժակը խմում են Տէր - Անդրէաս քահանայի զուտորը և կուսանաց վանքում տպաշխարող մի գեղեցիկ կոյս:

1785 յուլիս 23-ին պայթում է մի նոր փոթորիկ, բայց այս անգամ ոչ թէ նոր-Զուգայեցիներին, այլ Փէշրիս գաւառի խեղճ գիւղացիութեան գլխին: Այդ գաւառը Պարսկա-Հնդկաստանի թեմի և Սպահանի ամենահայաշատ գաւառներից մէկն է, ուր ապրում են Շահ-Աբրահիմ ձեռքով գաղթած մի բուռն հայ գիւղացիներ: Ահա այդ գաղթական բեկորների գլխին կատարեալ պատուհաս է դառնում Մահմադ խանը: Ո՛վ էր սակայն նա: Պարսկաստանի ամէնանշուք և ահաւոր բռնակալներից մէկը, որ իր բարբարոսութիւններով խեղճ գիւղացիներին արիւն-արտասուք է թափել տալիս: Նա նախ ճնշում է և յաղթում Զաֆար ու Շահավալայ խաներին, այպա իր զինւած ձիաւոր խմբով յարձակու՛մ է Փէշրիս գաւառի անտէր ու անօգնական գիւղացիներին վրայ: Բացում է մի սրտաճըմ լիկ տեսարան: Գազան զինուորները գիւղերի ոչխարներն ու եզներն աւարի են տալիս, ցորենի ամբարները կողոպտում, եկեղեցիները այրում, գեղեցիկ աղջիկներին և երեխաներին մայրերի ձեռքից խլում:

Բարձրանում է սուգ ու շիւան. մայրերն ընկնում են խանի ստները և արտասուլից աղաչում են խնայել իրենց սրտի հատորներին: Բայց խանը մտում է անողորմ նա գիւղացիների մեծ մասը տարագրում է Պարսկաստանի խորքերը: Ծանապարհին ծառից կախել է տալիս խոյզանցի Տէր-Բարսեղ և Բուլորանցի Տէր-Մովսէս քահանաներին և անասելի տանջանքների ենթարկում: Հայ ժողովրդի դարաւոր մարտիրոսագրութեան մի տխուր դրագոն են կազմում Մահմադի բռնութիւնները: Ահա թէ ինչպէս է ողբում այդ տխուր անցքերը ժամանակակից Մտեփանոս Երէցը իր մի բանաստեղծութեան մէջ՝ որ կրում է «Ռ՛րն ողբացուք» խորագիրը՝

« Արդ ո՛րն ողբացուք՝  
 ԶՂոկով ոչխարսն մեր՝ զոր աւար առին,  
 Թէ այս՝ որ թանկ կարօտ մնացաք.  
 Զամբարնս ցորենոյ՝ զոր կողոպտեցին,  
 Թէ այս՝ որ հացի կարօտ մնացաք:

Արդ ո՛րն ստշորեցուք՝  
 Զարտս այս մեր՝ զոր հնձեցին,  
 Թէ այս՝ որ հասկաքաղի կարօտ մնացաք.  
 Ո՛րն մորմաքեցուք՝  
 Զսայլս մեր՝ զոր այլեցին,  
 Թէ այս՝ որ կալի կարօտ մնացաք:

Արդ ո՛րն շախարեցուք՝  
 Զգեղեցկայարմար եկեղեցիս մեր՝ զոր հրդեհեցին,  
 Թէ այս՝ որ ժամի կարօտ մնացաք.  
 Արդ ո՛րն սոճեցուք.  
 Զտունս մեր՝ որք փլուցեալ կան,  
 Թէ այս՝ որ բացօդեալ մնացաք.  
 Եւ զո՛րն կոծեցուք՝  
 Զմեռանալս՝ որք գիշտեալ կան,  
 Թէ զմեզ՝ որք կենդանւոյն մեռեալ եմք »:

Այս պարզ յուզիչ և սրտատուչ ոտանաւորը ամենք ամբողջութեամբ առաջ բերեցին: Գաղափար տալու համար ընթերցողներին ժողովրդի ծանր դրութեան մասին:

1. Այս անտիպ բանաստեղծութիւնը ձեռք ենք բերել մի հին զբլագրից, 1921 թ.ին, կր «Ապահանի Զաւար-ժաւալ գաւառ» 14 հայաբնակ գիւղերի ձեռագրերն էին ուսումնասիրում:

Աղէտները սակայն չեն դադարում: Ժողովրդի դրութիւնը գնալով վատթարանում է: 1786 թ. Զափար Դուրի խանը տիրում է Սպահանի գահին, և ահա Նոր-Ջուղայեցիների համար բացուած է մի նոր արտանմուտի տեսարան: Նա հայերից պահանջում է 15 հազար թուաման փող: Այդ գումարը շուտով ձեռք բերելու նպատակով բանտարկում է նա Մկրտիչ առաջնորդին, Տէր-Մինաս քահանային և ծանր տանջանքների ենթարկում: Հայերը լացով և աղաչանքով ընկնում են Զափարի ոտները և իրենց արտասուքներով ազատում առաջնորդին ու քահանային, վճարելով միայն 600 թուաման:

1787-ին Մահմադ խանը երբորդ անգամ մտնում է Սպահան: Ույս անգամ դժբախտացնում է նա Բուրւարի գաւառի հայ գիւղացիներին: Այդ գաւառը նոյնպէս Պարսկա-Հնդկաստանի թեմի հայաքնակ գաւառներից մէկն է, որի բնակիչները կազմում են Շահ-Արքայի ձեռքով գաղթեցրած գիւղացութեան բեկորները: Մահմադ խանը կեղեքում, հարստահարում է նրանց, ապա բուրսին էլ գերի վարում Պարսկաստանի խորքերը:

Մերն, հարստահարութիւններին հետեւում են քնութեան պատահարները: Նոյն 1787 թ. երաշտը փճացնում է ցորենի ու գարու արտերը և չորացնում ամբողջ հունձը: Դրա հետևանքն այն է լինում, որ մի սոսկալի սով է ընկնում Սպահանում, Նոր-Ջուղայում և գիւղերում ու աւելի դժբախտացնում առանց այն էլ շատ դառնացած ժողովրդի կեանքը:

Քաղաքական փոթորիկները, սիստեմատիկ բռնութիւններն ու հարստահարութիւնները, թանգութիւնն ու սովը քայքայում են Նոր-Ջուղայի ժողովրդի արնտեսական դրութիւնը: Շատերը ծայրայեղ աղքատութեան մատնւում և վերջ ի վերջ ստիպուած թողնում են իրենց օջախները և պանդխտում: Պանդխտում է նոյն իսկ ս. Ամենափրկչեան վանքի առաջնորդը: Նա բռնակալների սարսափից 1791 թ.ին փախչում է նախ Բասրա, ա-

պա Մուրաթ և այնտեղից էլ անցնում Մադրաս:

Այսպէս՝ սարսափելի թանգ են նստում քաղաքական ներքին ալէկոծութիւններն ու խռովութիւնները Նոր-Ջուղայեցիների գլխին:

Անուհետև էլ դեռ շարունակւում են այդ բռնութիւնները, բայց մեր ծրարքից դուրս է տալ նրանց նկարագրութիւնները: Այսքան միայն կ'ասենք, որ այդ աղէտների հետևանքով ճոխ ու փարթամ Նոր-Ջուղան հետզհետէ աղքատանում է ու քայքայւում...:

Ահա այդ թշուա և դառն ժամանակաշրջանի մէջ է ապրել Դուռ Յովհաննէսը: Սակայն մենք նրա տաղերի մէջ չենք տեսնում յիշատակութիւն ժամանակակից այդ աղէտների մասին: Խնջով բացատրինք այս հակասական երևոյթը: Անշուշտ Դուռ Յովհաննէսի նման զգայուն աշուղը չէր կարող անտարբեր մնալ ժողովրդական ընդհանուր թշուա վիճակի հանդէպ և լռել, երբ դաժան բռնակալները ժողովրդին տանջում էին և հարստահարում, երբ խեղճ գիւղացիներին գերի վարում և յափշտակում նրանց գաւակներին, երբ խլում էին կուսանաց վանքի կոյսերին և երբ շատերը քաղցից սովմահան էին լինում: Նա, անշուշտ երգած պիտի լինի այդ դառն անցքերը, բայց այդ երգերը մեր ձեռքը չեն հասել: Երևում է, որ նրանք զոհ են գնացել ժամանակի կլանող ժանդարներին, թէև հաւանական է և այն, որ նա այդ աղէտների ժամանակ, զուցէ, եղել է պանդխտութեան մէջ և կամ բռնակալների երկիւղից ոչինչ չէ գրել: Մեր այս ենթադրութիւններն ու հարցերը կարող են պարզել փոշիների տակ մնացած ձեռագիր մատեանները,

Այժմ ասենք մի քանի խօսք էլ Դուռ Յովհաննէսի միւս երգերի մասին:

2. — Սիրոյ երգեր՝

Դուռ Յովհաննէսի երգերից արժանի են

1. Տէս՝ մեր յօդածը Վիեննայի «Արեգ»-ի մէջ, 1922 թ. 2, 4-րդ րարս:

առանձին ուշադրութեան սիրոյ երգերը, որոնք գրուած են, ինչպէս միւս տաղերը, Նոր-Ջուղայի ժողովրդական լեզուով և միջ-նադարեան աշուղական ձևերով: Այդ երգերը, որոնք բոլորովն են երգչի սրտի խորքից, արևելեան գունեղ ոճով ու վաստ զգացմունքներով զեղուն երգեր են, որոնց մէջ տիրում է պարզ, ժողովրդական, ռամկական արևատ և որ հաղորդիչ է այդ չափով:

Նրանց մէջ գերիշխողը սէրն է, սիրոյ հոգեբանութիւնը: Այնտեղ Ղուլ Յովհաննէսն իրայատուկ տաղանդով սէրն է օրհնեցում իր լարերի վրայ, իր անհատական ապրումները, իր յոգեբն ու անուրջները, իր հոգեկան ներքին տագնապներն ու խոհերը, յուսահատութիւնն ու մտայլը երգում տարբեր երանգաւորութեանով ու ելեւէջներով: Այնտեղ ցոլանում է մի մարդկային սիրտ, մի տառապած և տանջուած հոգի, որ խորապէս անկեղծ է և զգայուն:

Հոգեկան այդ կեանքը Ղուլ Յովհաննէսն արտայայտել է զարմանալիօրէն զբարեկերպով:

Աշուղը ջիւան սիրտը շղթայում է գեղեցիկ մի «զօզալի» սիրով: Այդ կոյսը անմասն գեղեցկութեան տէր՝ զբարեւիչ մի աղջիկ է: Աշուղն արար աշխարհ ման է եկել և շատ գեղեցիկներ տեսել, բայց ոչ մի երկրում չի գտել իր սիրածի «բարբարը»:

« Բոլոր երկիր ման եկել ամ, էլ մին յատուկ աշխարհ չկայ, Շատ գեղեցկութիւն տեսել ամ, Վալլայ քեզ բարբար չկայ »:

Աշուղը ջերմ հասատով ողջունում է իր եարին և գեղեցիկ նմանութիւններով ու պատկերաւոր համեմատութիւններով դրատում նրա գեղեցկութիւնը. նրա շրթունքներն են մեղր ու շաքար, երեսը՝ լոյս, յօնքերը՝ կամար, մազերը՝ մի փունջ նարգիլ, հասակը՝ շինար, կուրծքը՝ մարմար, ստինքները՝ «թագայ նուրբ»: Ինտանելին՝ նա անմահական մի վարդ է, որին բլրուելներն արշալոյսին «թամաշայի» են

զալիս. կամ մի արուսեակ ասող է, որ ամէն առաւօտ դուրս է զալիս և արեգակի լոյսի պէս փայլում աշխարհին վրայ:

« Բօյոք սալվու ծառի նման, Աինէդ մարմար քարի նման. Նքծէրդ անոշ քարի նման, Քանց էդ թագայ նուրբ չկայ:

Պատկերով հուրի աս դու, կամ մալախք, թէ ղլման աս. Փայլում ա լոյս երեսդ, Արեգական նման աս դու »:

Հուրի՝ է թէ հրեշտակ, լալան, թէ առաման, արեգակ՝ թէ լուսնեակ, աշուղը չի կարողանում սահմանել: Եւ այդպիսի չքնաղ կարի սիրով արեցած՝ նա երգեր է հիւսում և խնթի պէս ման զալիս: Նրա կարտ աչքերն այլևս ջուն չունին, նրա հոգին թևեր է առնում և թռչում մի անյայտ աշխարհ, նրա սիրտը լող է տալիս անուրջներին և երագանքների ծովում: Եւ նա միջնադարեան ասպետների նման գիշեր, ցերեկ եարի դուան նստած՝ մինչև լոյս սիրոյ խաղեր է ասում և տաղեր հիւսում:

« Քո դրան ամ գիշեր, ցերեկ, երբբ հաս իմանում աս. Անում աս մէլիկայս ինձ, Այ մէկ խէտով սպանում աս »:

Սակայն եարը չի հասկանում երգչի մաքուր, անարատ սիրտը, անմեղ զգացումները և անտարբեր է մնում ու խոցում նրա քնքոյշ և զգայուն սիրտը: Եւ անա սկսում է սիրոյ յուզիչ դրաման: Սիրոյ ցաւից աշուղն ընկնում է հոգեկան տանջանքների մէջ և ծանր կերպով հիւանդանում: Նրա ցաւին դեղ չի կարողանում անել նոյնիսկ լողման բժիշկը, որովհետև այդ ցաւ ոչ դարդ է և ոչ էլ վէրք, այլ սիրոյ ցաւ է: Այդ դարդի զեղը՝ եարի սէրն է: Եւ վշտաբեկ աշուղը դիմում է եարին և խնդրում, որ իր անախարման ցաւին զարման անի:

«Քաղցր լեզուդ շարաթ բղխում, եարա կայ, Քո խօսկէրն անգին քար ա, եարա կայ. Սիրտս բանամ, տես քանի՞ տեղ եարա կայ, Ե՛կ զեղ արա, դուն բժիշկ աս, դուն շատ աս»:

Բայց եւրբ չի խղճում աշուղին և թողնում է նրան վշտագին սպասումների մէջ։ Աշուղը խորը յուզւած՝ գիշեր, ցերեկ տուչորում է ու հաշ ու մաշ լինում եւրբի սիրուցը և այլ ևս սիրոյ թովչանքին չղիմանալով՝ դիմում է սրբածին և նորանոր երանգներով պատկերացնում իր հոգեկան մեկամղձոտ դրուժինը։

«Արի, իմ նազանի գէլբար,  
 Զո՛ւմ ըտէնց ինձ դաղդաղում աս.  
 Դօնչայ ծաղիկ ամ քեզ համար,  
 Ոտար ձեռոք ինձ քաղում աս։  
 Գիշեր, ցերեկ չունիմ զարար,  
 Արտասուք զնում վարար.  
 Արի, իմ սրտի էրվածն,  
 Զի պակասում աշկիս լացն.  
 Գծէլ աս էշիի ջաղացն,  
 Արի պէս ինձ աղում աս»։

Սիրոյ զգացմունքը և իր հոգեբանական ծանր վիճակը ակելի մեծ թափով հնչեցնում է Դուլ Յովհաննէսը «Ետար քո տեսոյն զըֆթար ամ» խորագրով նորանաւորի մէջ, որ զրւած է Սայիաթ—Նովայական շնչով և տաղաչափութեամբ, թէ է անդ անդ բո՛նաղաւտում է և կորւում երգի երաժշտական չափը։

«Եւր, քո տեսոյն զըֆթար ամ, եւրար դար-  
 |դիս դարման կանես.  
 Մայիլ ամ սիրուն հօտնուդ, մահ շամալիդ  
 |հէյրան կանես.  
 Գու հուրի աս, թէ էնսան աս, հառ դամ մէկ  
 |նչայ կանես.  
 Թագաւոր աս ու կայսեր աս, վերայ թաղդին  
 |նչան կանես.  
 Վառվում աս մաշալի պէս, չոք կողմդ ջրա-  
 |ղուան կանես.  
 Երեսդ ճառագայթ աս միշտ փայլում աս դու  
 |մուղարար  
 Զօրեդ աս հրաշապէս, լուսաւորես թամամ աշ-  
 |խարհ»։

Սակայն եւրբ դարձեալ անտարբեր է մնում և թողնում աշուղին «Թաք ու թանայ», վշտոտ ու թախծոտ, որով փշրւում են նրա հոգու ծաղիկները, խամբում վարդազոյն երազներն ու յայսերը։ Եւ նա խուրապէս խոցւած, սիրտը լցւած վշտոտ եր-

գերով՝ ձեռք է առնում շօնգուրը, սարերն ընկնում և կանչում իր կորցրած «Չէյրանին», կանչում է իր «Վարդ—բրուլին»։ Թափառում է նա մենակ, բուրբովին մենակ, անեար, որ զէթ մոռանայ իր վիշտը, բայց ի զուր. սիրոյ հրեղենը չի հանգչում նրա կրակ հոգու մէջ, և նա անյոյս ու վշտոտ՝ գանգատում է իր անբախտ կեանքից։

«Միացէլ ամ թաք ու թանայ,  
 Էսքան էլ ինձ մենակ՝ չկայ.  
 Համգամ չունեմ՝ սիրտս բանայ,  
 Գարդիս ընկեր քօմակ չկայ.  
 Զեմ էլ մոռան, թէ պոճանեմ,  
 Հոգի անող հրեշտակ չկայ»։

Սիրոյ դրաման այստեղ էլ վերջանում է։ Երգիչը չի կարողանում հասնել իր «արուեսակ ասողին», իր «զօնչայ վարդին»։ Նա ամուսնանում է ուրիշի հետ։ Այդ մտայլ իրականութիւնը խոր վիշտ է պատճառում աշուղին և նա սաստիկ յուսահատութիւնից անիծում է «ղէլբարին»։

Ահա Դուլ Յովհաննէսի ճակատագրական վախճանը, ահա նրա կեանքի և սիրոյ պատմութիւնը։ Նա սիրեց մի գեղեցիկ կոյսի, բունն, անասնման և ջերմ սիրով։ Այդ սէրը սակայն նրան չժպտաց, չվայելեց նա՝ սիրոյ քաղցրութիւնն ու երջանկութիւնը և նա մնաց յուսարեկ, անմխիթար ու թախծոտ։

Դուլ Յովհաննէսի ճակատագիրը զարմանալիորէն նմանում է տանութեքորդ դարի նշանաւոր քնարերգակ աշուղ Սայիաթ—Նովայի ճակատագրին, որ ինչպէս յայտնի է, սիրեց ամենախորը սիրով, բայց փոխադարձ սէր չունեցաւ։

3. — Բարոյական—խրատական

Սակայն Դուլ Յովհաննէսն միշտ էլ իր եւրով չի զբաղւում, նա երգի նիւթ է շինում նաև մի շարք բարոյական խրատներ, որոնք ընդհանրապէս ցոյց են տալիս աշխարհիս ունայնութիւնը։ Այս մտօտը շատ է հրգեւել քրիստոնէական և հայոց հին գրականութեան մէջ։ Նոյնպէս երգել

են պարսկական սուֆի բանաստեղծները՝ Երզնի են և մեր միջնադարեան երգիչնե-  
րից շատերը, ինչպէս կոստանդին Երզնկա-  
ցի, Մկրտիչ Նաղաշ, Յովհաննէս Թլկու-  
րանցի, Ֆրիկ, զանազան ելեէջներով և  
յանախ նոյն պատկերներով, Ղուլ Յով-  
հաննէսը ևս երգել է այդ ուղղութիւնը։  
« Աղամայ որդի » ճերթածի մէջ աշուղը  
խորատու է ազամորդոյն՝ աչքերով կոյր  
չլինել և օգնել աղքատներին, խեղճերին.  
յորդորուս է նաև մեղքերի համար թողու-  
թիւն հայցել և հոգու ճանապարհը մաքրել,  
որովհետև բոլորս էլ էս աշխարհում հիւ-  
րեր ենք և մեր այս կեանքն ունայն է և  
անցաւոր.

« Հինգ օր էս աշխարհուսն դու մին դոսաղ սս,  
չար արա քո հոգուն, քանի որ սաղ սս »:

Խրատու է նոյնպէս չարից հեռու մնալ  
և բարի գործել, որովհետև մարդուս միայն  
բարի գործերն են որ կը մնան. և ով որ  
էս աշխարհում բարի գործի, նրա հոգին  
կը լուսաւորի:

4. — Միւս երգերը

Ղուլ Յովհաննէսն ունի մի քանի հատ  
երգիծական և մի քանի հատ էլ այլարա-  
նական երգեր, որոնցով նա մերկացնում  
է և քննադատում ժամանակակից բարբերը։  
Այդ երգերը թէև առանձին գեղարեստա-  
կան արժէք ցոյց չեն տալիս, սակայն ար-  
ժէքաւոր են իրենց ժողովրդական ոգով և  
անարեստական անկեղծութեամբ։ Թողել  
է նաև մի ոտանաւոր « Տաղ ի վերայ մար-  
դոյս կենաց անցաւորութեան և ծննդեան  
մինչև ի մահ » խորագրով, որ ժամանա-  
կին ժողովրդականութիւն է գտել և մինչև  
այսօր իսկ Նոր - Ջուղայի ծերունիներից  
շատերն ամորղութեամբ անգիր են իմա-  
նում։ Նրա մէջ երգիչը պարզում է իւրա-  
քանչիւր հասակի նկարագրութիւնը՝ սկսած  
մանկութիւնից մինչև խորին ծերութիւն։  
Այս մօտիւր հայ աշուղական զբականու-

թեան մէջ կոչուում է շատարամա։ Թէև  
ոտանաւորը զբական մի արժէք չունի,  
բայց հետաքրքրական է իր ներքին բու-  
վանդակութեամբ։

5. -- ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԻ ԴԵՐԸ  
Պարսկահայ ժողովրդի մտաւոր կեան-  
քում Ղուլ Յովհաննէսը որոշ դեր է կա-  
տարել։

Նա իր դարաշրջանի միակ աշուղն է,  
որ իր ամբողջ կեանքը նւիրել է ժողո-  
վրդին։

Այդ ժողովրդի հաւար նա երգեր է հիւ-  
սել, եղանակներ կերտել, երգել ու նւագել։  
Երգել է նա իր սէրը, իր հոգու յոյզերն  
ու անուրջները, իր ապրած զանազան  
մոմենտներն ու սրամադրութիւնները և  
արտայայտիչը հանդիսացել իր ժամանակի  
երիտասարդութեան զգացումներին ու յոյ-  
զերին։

Երգել է նա ժամանակի քաղաքական  
փոթորիկները, ժողովրդի վիշտն ու տա-  
ռապտոնքը և բուն կերպով բողոքել բռու-  
նութեան ու ճնշումների դէմ։

Այլ և յօրինել է բարոյական-խրատա-  
կան տաղեր և ազնւացրել ժողովրդի սիրտն  
ու հոգին։ Կիրտել է նաև երգիծական եր-  
գեր, որոնցով նա ծաղրել է ու քննադատել  
ժամանակակից մարդկանց բարբերը, նոյն  
իսկ շի խնայել իր ժամանակի կանանց և  
մերկացրել է նրանց թերութիւններն ու  
արատները (Եարիս դոնով)։ Նոյնպէս շա-  
րահիւսել է այլաբանական երգեր, որոնց  
մէջ նա այլաբանական համեմատութիւն-  
ներով հարածել է ժամանակակիցների  
կեղծութիւնը, անմտութիւնը, խաբէու-  
թիւնն ու մեծամտութիւնը։

Ղուլ Յովհաննէսի ծառայութիւններից  
մէկն էլ կայանում է նրանուս, որ նա շա-  
բունակել է պարսկահայ աշուղների արես-  
տը և ժողովրդի մէջ վառ պահել աշու-  
ղութեան սէրը, տարածելով աշուղական  
երգն ու մեղեդին։

Այսպէս նա ժողովրդի համար հղել է  
մի արտիստ-աշուղ, բանաստեղծ-երաժիշտ  
և բարոյախօս-բարբոզի։

1. Ջէւալեղին Բուսի շիմագիրն է այդ կրօն-  
խնամասերական զգրոցին։

Այս բոլոր առանձնայատուութիւններով  
աշուղ Ղոււ Յովհաննէսը մի պատուաւոր  
տեղ է զբաւում պարսկահայ աշուղական  
գրականութեան պատմութեան մէջ:

ԱՐԱՐ ԻՐԵՄԱՆ



Մ Ա Յ Լ Ա Պ Ա Ն Ը

Ինձ սայլ մը յարդի  
Տղմուտի մը մէջ կ'երթայ կը թաղուի:  
Բաց դաշտի վերայ այդ պատահեցաւ.  
Սալլպանին օգնող մը չըկայ բընաւ.  
Կա շատ հայհոյանք բերանէն հանեց,  
Թափելով անէծ  
Թէ՛ իր ձիերուն,  
Թէ՛ խոռոչներուն,  
Թէ՛ վարած սայլին  
Ու թէ իր անձին,  
Վերջապէս դիմեց  
Այն աստուծոյն մեծ  
Որու քաջութեան

Գրուատիք կու տայ առէն մէկ բերան:  
«Հերթիւէ՛ս, կ'ըսէ, ալէ՛ օգնութեան  
Եղուր ինձ հասիր.  
Եթէ թիկունքովդ զաշխարհ վեցուցիր՝  
Թեւովդ կարող ես զիս փրկել սակէ»:

Յանկարծ երկինքէ  
Չայն մը կը լսուի՝ որ կ'ըսէ սապէս.  
«Ճի՞գ ու աշխատանք կ'ուզէ Հերթիւէս,  
Ու յետոյ մարդուն  
Կ'օգնէ շանքերուն:  
Կայէ՛ մէկ անգամ թէ արգելքն ո՞ր է.  
Անուոց վերայէ  
Վերցուր հանէ նախ  
Այդ կպուռն շողախ՝  
Որ մինչեւ տեսակ զանոնք պատած է.  
Մ'անցունէր բուպէ.  
Ա՛ն ձեռքըդ բերիչ, խորտակէ սա վէմ:  
Սա խոռոչին մէջ հող լեցուր տեսնեմ,  
Ըրի՛ր այս ամէնն: — Ա՛ն, տէ՛ր, ըրի՛,  
— Ուրեմըն ես ալ կ'ազատեմ քեզի,  
Ըսաւ վերէն ձայնն, ձեռք առ քու մորակ»:  
— Առի՛, աս ի՛նչ է. սայլակըս հիմակ

Կը քալէ ինքնին.  
Փանօք Հերթիւէսին:  
Երկնքն նոյն ձայն  
« Կը տեսնես, կ'ըսէ, Բիւպէս քու ձիան  
Տղմուտէ պրծան՝  
Գեզի օգնէ՛ դուն,  
Որ տէրն ալ վերէն ընէ օգնութիւն »:



ԵՐԿՐԴՊԳՈՐԾԸ ՈՒ ԻՄ ՈՐԳԻՆԵՐԸ

Ջան դիր, աշխատէ՛ դուն միշտ անվընատ  
Ամենէ հաստատ  
Գլխադրամն է ատ:  
Հարուստ հողագործ մը մահուան կէտին  
Որդիքը կանչել տալով իր առջին՝  
Այս կերպ խօսեցաւ.  
« Սիրելի որդի՛ք, չըլլայ թէ բընաւ  
Կրակու էլլէք այն բեղուն գետին՝  
Ջոր օրհնեալ նախնիք մեզի թողուցին:  
Հոն կը գտնուի  
Ճոխ գանձ մը գաղտնի:  
Տեղը չըգիտեմ. այլ քիչ յոգնելով  
Կրնանք դուք գանի գտնել սպասով.  
Այն օր որ տեսնէք հունձքը լըմացած՝  
Հերկ տըլէք հողին, եղէ՛ք անկասկած.  
Անդուլ փորեցէ՛ք,  
Ուժգին բահեցէ՛ք.  
Մի՛ թողուք մէկ թի՛գ՝ զոր նորէն նորէն  
Ձեր տխտիչ ձեռքեր վեր ի վայր չընեն»:  
Հօրը մեռնելուն՝ որդիք կը սկսին  
Քրքրել հողը կրկին ու կրկին.  
Հոս, հոն, ամէն կողմ: Այնքան գործ տեսան՝  
Որ տարեգլխին իրենց անդաստան  
Խելթէ մտքէ վեր  
Եղաւ քարեբեր.  
Պահունի ըստակ հոն չէր գտնուեր:  
Սակայն իմաստուն  
Էր ընթացք ծիրին՝ երբ մահուան պահուն  
Ուզեց իր որդւոց հասկըցընել թէ  
Աշխատութիւնը ըստ ինքեան գանձ մ'է:  
[ԱՅՅՕԻՆԵՆ  
Թարգ. Մեքսիկո Կուլպրան,